

նանք երեւակայել, թե ի՞նչ թանկադին հրատարակության մը պիտի ըլլա ան, ծրագրոված ճոխացումով, երբ Մայր Աթոռ իր հաբուս տպարանը ունենա:

Թերթերու մէջ կարգացներ, թե Վեհափառ Հայրապետին արտասահման զանված միջոցին, քանի մը զաղութներ իրենց աշակցությունը խոտաացած են Անոր եկեղեցաշէն ծրագրերուն համար: Այսպէս, Միւրան, Ման-ձեսար, Մարսել, Փարիզ, հանձն առած են նորոգութեան ծախքերը Հայաստանի կարգ մը սրբավայրերուն, որոնք մեր հարաւարտակութեան հօրքա գեղեցկագոյն նմուշները և պատմութեան նփրական հուշարձաններն են:

Նորին Ս. Օծութեանը ամերիկահայութեան բաժին հանած է էջմիածնի տպարանին գրեման պարտականութեանը: Այս նպատակով կազմված հանձնախումբը, գլխավորութեամբ տիար Նովանդ Աղաճանյանի, ամիսներէ ի վեր անգղոյ կգործն և ուրախալի է իմանալ, թե իր ջանքերը ինչպէստար հաջողութեամբ պատկերու ամեն հայս կենընչեն: Հայրենակցական քանի մը միութեաններ, ազգային հաստատութեաններ և բարեսէր անհատներ, փայլուն թե համեմատ գիրքերու տեք, սիրով կատարած են կամ հանձն առած են կատարել իրենց պարտքը:

Այս ամիս և նոյեմբերին, տպարանի ձեռնարկին հանդեսներն ու հանգանակութեաները տեղի պիտի ունենան բազմաթիւ վայրերու մէջ: Ամերիկահայ գաղութին պատմութեանը առատաձեռնութեան, զոհարերութեան, ազգային լուրջ հարցերու խոր հասկացողութեան շրջա տպացուցները տված է, ամեն անգամ որ ճշմարտագոյն կացութեան մը տուլիս զանված են:

Էջմիածնի տպարանին համար անհրաժեշտ նկատված 120.000 դոլարի գումարը զուացնել շատ կենսական գործ մըն է, որուն գահացում տալը պատվո խնդիր մը պիտի է նկատենք մեզի համար:

Ամերիկահայութեանը հարկ է այս գոհունակութեանը պարգևն Հայաստանյայց եկեղեցւո հովիւներու կենդանի արտահայտութեանը և դարերէ ի վեր անոր միակ խորհրդանիշը եղող Ս. Էջմիածնի Աթոռին շնորհագարդ ու սրբափայլ Գահակային:

Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

(Բոստոն, «ՊԵՅՔԱՐ» օրաթերք,
24 հոկտեմբերի 1956 թ.)

ՆՊԱՏԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Շուրջ տարի մը առաջ էջմիածնի գումարված Ազգային-եկեղեցական ժողովին մէջ, ազգընտիր Վեհափառի բարի ակնարկին դիմաց, Ազգին ու եկեղեցիին փառքին համար տպաստվորել գիտցող հոգեւոր և աշխարհական մարդիկ, իրեն պարտականութեան և նվիրագործութեան, դարբաս տալու ավանդական սովորութեանը հովիւներու մղումով, «Մայր Աթոռին համար տպարան մը հաստատենք» ձայնեցին միաբերան:

Այդպէս ձայնողները Ամերիկայի հայութեան պատվո խոսքն էր, որ կարտասանեին արդարեւ նվ անոնց այդ խոստումը հանձնընթացով հեռագրաթիւրուն՝ ի լուր աշխարհացիով հայերուն: Իմացողներ ցնծացին և իրենց ուրախութեան մասնակից ըրին իրենց բարեկամները, իրենց զրացիները:

Ուրեմն նպատակ մըն էր, որ կծանուցվեր, վսեմ նպատակ մը, որուն պիտի հավատար, որուն համար հարկավ պիտի զոհարերք մեր ցեղին սա կարկուր մասնիկը, որ կանվանվի Ամերիկայի հայութեան...:

— Որո՞ւն, որքա՞ն պիտի է բերել մեր բնծան հօգուտ Մայր Աթոռի տպարանին:

Նվ կկրկնվին, կբազմապատկվին այս

կանչերը...: Կառչէր, կհիւնար հայտնաբերված այդ ողիին վրա, կհրձիւր...:

— Ապրի՛ր հայ ազգրտիր, հազար ապրի՛ր: Առտուն կանուխ հաղիվ զրասնայակ իշած, համակրելի ձայն մը խանդաղին կբսն:

— Նրեկ Պետերսոնի փորբաթիվ հայեր 2.000 դոլար նվիրեցին Մայր Աթոռի տպարանին համար:

«Նրանի՛ անոնց, որ հիշատակ մ'ունին ի Սիոն», — կարտասանեն մեր շրթները...: Ահա՛ առաջին փայլուն օրինակը, ապացուցն իսկ նպատակի մը իրագործման: Ահա՛ հավատքի, հավատարմութեան և նվիրումի ոգին, զոր առաքինի, ավանդապաշտ մեր ժողովուրդը կուզէ, կփափագի իրեն տրված ամեն առիթներով այսպէս ցույց տալ լուսափորշահաստատ Ս. Աթոռին, որուն վերե դարն ի դար վառ կմնա այն սրբալույս կանթեղը, որ կլուսավորէ հայ մարդոց հոգիները ամեն տեղ:

Յոթնօրյա ձեր նույնանման խոհերուն հաճախներն արըշիտ տակավին, ահա նույն ծանոթ, սակայն այս անգամ ուրախութեան զգայութեանն զոգացող ձայնը ձեզի կբսն:

— Նյու-Արքի ափ մը հայեր 2.000 դուրս
նվիրեցին երեկ Մայր Աթոռին...

Ունիք արդեն հիմա ձեր սեղանին վրա
մեքսիկական տառերով լրագիրներ, ուր բարձ-
րաձայն կկարդաք նվիրատվությունները
հիմնադրամներու, հայրենակցական միու-
թյուններու, անհատ հայերու...

— Մուլաթիացի, խարբերողի հայեր բե-
րած են մեծաքանակ նվիրներ Մայր Աթոռին
համար և շնչկածագցի, շապին-գարահի-
սարցի հայերու փոքրիկ ընծաներուն վրա,
կհավատամ, պիտի բերել ուզեն իրենց
նվիրները սեբաստացի, տիգրանակերտցի,
պոլսեցի, ղմյուռնացի և ամեն տեղացի
հայեր...



Առեր եք ձեր ծուկներուն վրա մեծադիւր
նկարը Ս. Էջմիածնա Մայր Տաճարին: Կդի-
տեք այդ հրաշակերտ կառույցը հնադար-
յան: Ձեր մտքին, ձեր լեզվին վրա կուզան
կանգ առնել անունները շինարար, ստեղծա-
դործող, սքանչելատիւ հայրապետներուն,
որոնք մտածեր, բաներ ու տառապեր են Հայ
եկեղեցւոյ պայծառութեան համար: Անոնց
հորինած աղօթքներն ու շարականները բառ
առ բառ, տող առ տող հիմա կարձակվին
ձեր լեզվին:

Գարերը իրենց հողմերովն ու սարսուռ-
ներով, իրենց կրակի լեզվակներովն ու ա-
րյան գետակներովը անգամ չեն կրցած սա-
տանեցնել Հայ եկեղեցին: Այդ իրողության
դիտակցութիւնը կամրապնդէ հայուն մեջ
հավատքը, որ Վաղարշապատի բլրանց վրա
և Ավարայրի դաշտին մէջ ավանդվեցաւ
ուղմիկ ու ազատասեր մեր պապերուն:

Անոնցմէ մնացած թանկագին ժառանգե-
րեն մեծասքանչ կոթողն է այս օրվան
Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, ուր, լուսա-
վորահաստատ Գահին վրա բազմած կտես-
նենք Մեծ Հավատաւորը, որուն սրբատառ
պատգամները կնքընչեն, կոզկորեն հա-

մայն աշխարհի հայութիւնը: Զուսպ, սա-
կայն անկեղծ ու խանդակաթ հրավերները
Անոր կարագացնեն կթոտ քայլերը հայ ցե-
ղի դավակներուն՝ ուխտի երթալու ի Մայր
Աթոռ, ծնրադրելու, երկրպագելու այն սե-
ղանին առջև, ուր իրենց հետ և իրենց կուշ-
տին պիտի զգան ներկայութիւնը մեծագործ
Վեհափառներուն:

Նպատակ մըն է ուրեմն, որուն իրագոր-
ծումին համար ամերիկահայութեան կող-
քած է Սրբազան Հայրապետին կողմէն: Լավ
չիտենք, որ վաղը երբ իրականանա այդ
նպատակը, Մայր Աթոռի տպարանի մա-
մուլներուն թափալումին հետ պիտի զեղ առ
զեղ, գիրկ առ գիրկ սեղաններուն վրա կու-
տակվին էջերը այն ծավալուն գրքերուն,
որոնք պիտի գործածվին Հայ եկեղեցւոյ մեջ
ի մխիթարութիւն հայ հավատացյալներուն:

— Պիտի հաջողի մեր այս նպատակը,
մեր քույրերուն և եղբայրներուն զոհարերու-
թեան շնորհիւ:

— Ամերիկայի հայութիւնը հուսախաբ
պիտի չլընէ Վեհափառ Հայրապետը, ես ա-
զոր կհավատամ:

Այս ինչքա՛ն հավատք, այս ինչքա՛ն ան-
կեղծութիւն և ինչքա՛ն ինքնաւստահութիւն
հավաքելով հանձնած ես այս տղուն, Տե՛ր,
որ կկոչվի Աղաճանյան Երվանդ, որուն թիկ-
նեղ, ամուր ուսերուն վրա հաճեք ես զենել
Մայր Աթոռի տպարանի սարքվածքին հա-
մար բացված արշալիկն շատ ծանր, բայց
հաճելի պարտականութիւնը:

Տո՛ւր, Տե՛ր, ուժ, տո՛ւր կամք (մանա-
վանդ սեր ու գործակցութիւն) բոլոր Եր-
վանդներուն, որոնք պիտի ուզեն ամեն
գնով սրբազնագույն այս նպատակը տանիլ
ի հանգրվան:

Ս. ՄԱՆՎԵԼՅԱՆ

(Թոստոն, «ՊԱՏԲԱՐ» օրաթերթ,
26 հոկտեմբերի 1956 թ.)

ՆՈՐ ՄԱՏՈՒԱՆ ԾԵՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՖԻԱՅՈՒՄ

Նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապե-
տին ուղղված դեկտեմբեր 9 թվակիր պաշ-
տոնական մի նամակով, Սոփիայի հայոց ե-
կեղեցական խորհուրդը յուրախօսյալմբ տե-
ղեկացնում է Վեհափառ Հայրապետին, որ
վերջերս, խանդավառ միջնորդութեամբ և բարե-
պաշտ հավատացյալների ներկայութեամբ,
հանդիսավորապէս կատարվել է Սոփիայի

հայոց գերեզմանատան մէջ հայ մատուան
հիմնարկների արարողութիւնը:

Մատուան հիմնարկների օրհնութեան մաս-
նակցել են Սոփիայի քահանայական դասը,
ղաղաց դասը, զխաւորութեամբ ավագներն
արժանապատիւ Տ. Վահան քահանա Փա-
րիազյանի: Այս ուրախ առթիւ ներկա էին
եւ Պոլսի հայոց հատկապէս հրաւիրված